ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԵՐԹԱՆ ՎԵՑՕՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ. Բ. ՀԱՏՈՐ 1862 ԹԻՒ 18. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20

Հրատարակի ամիսը երկու անգամ. - Վեցամսեայ գինն է 5 ֆրանգ. - Իզմիրին դուրս 6 ֆրանգ. - Ամբողջ նամակ կամ ծրար չընդունուիր. - Կ'ուղղուի Իզմիր՝ Դաշիկի գրասենեակը. Կիրիթ խան. - Իզմիրէն դուրս Մնծագոյց գործակալներն են, Կ. Պոչիս, խ. Թ. Գոչենեէրեան. և Գր. Վ. Աշեաթճեան. Գաշճիշար խան թիւ. 4. - Հաշիւ, Յ. Ս. Քիւրքճեանցի. - Փարիզ, M. A. Mourad, Rue du Dragon. 26.

Յարգոյ Խմբագիր

Հետեւեալ տողերը ձեր Հանդիսին էջերուն մէջ հրատարակելնիդ կը խնդրեմ։

ԱՌ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ

Voulez-vous connaître la situation politique et morale d'un peuple, demandez quelle place y occupent les femmes.

L. Aimé-Martin.

Կուզէ՞ք ճանչնալ ժողովուրդի մը քաղաքական եւ բարոյական կացութիւնը. իմացէ՞ք անոր մէջ գտնուող կիներուն դաշտօնը։

Լ. ԷՄԷ—ՄԱՐԹԷՆ

Ինքզինքս երջանիկ կը համարիմ, եթէ ձեր Հանդիսին միջոցաւ՝ ձեր յարգի ընթերցողներուն ուշադրութիւնը իմ տակաւ խորհրդածութիւններուն վրայ հրաւիրեմ. ինքզինքս բարեբաղդ կը սեպեմ եթէ իմ դիտաւորութիւնս (որ է օգտակար լինել իմ սեռիս) դլուխ ելնելը տեսնելու յաջողութիւնը ունենամ։

Թերեւս ամսթ սեպտի հին գաղափարի տէր անձերէ և նախապաշարմամբ լեցուն դլուխներէ, և կարելի է անվայել գործ համարուի՝ Իգական սեռին ազդասիրական, ընկերսիրական և ուսումնասիրական գաղափարները հրապարակաւ յայտնելը։ Կուսաստուէիս այս կարծիքէն չեմ երբէք, և չեմ ուզեր հին դրութիւններու հետեւիլ, մինչդեռ ակն յայտնի կը տեսնեմ արդի լուսաւորեալ աշխարհին նոր դրութեանց անհամար օգուտները և բարեմասնութիւնները։ Շատ կը փափաքիմ որ Հայ դրաւորական ասպարէզը Գեղեցիկ սեռն ալ արշաւէ, և Մատամ տը Սթաէլներ, Մատամ տը Սէվինեէներ և Մատամ տը Մէնթընոններ բազմանան և Հայ ազգին ապագան հաստատ հիմանն վրայ հիմնող կիները աճին մեր թշուառ Ազգին մէջ, որոյ շատ մեծ հարկաւորութիւն ունի, մանաւանդ արդի ժամանակս....։

Ձեզի կուզեմ խօսքս, ո՛ սիրասուն Հայ օրիորդներ, հեռի՞ք է ալ, ինչ որ տնային զբաղումներու ետեւէ ինկանք. ալ բաւ է, մեր առջի ընթացքին փոփոխութիւն տանք քիչ մը։ Եկէ՛ք, մեր սիրելի Ազգին վրայ խորհինք և անոր ապագայ սերունդը Հշմարիտ դաստիարակութեամբ և հայրենասիրական վեհ զդացումներով մեծցընելու և Հշմարիտ Հայեր և Հայո-հիներ պատրաստելու աշխատինք։

Իդական սեռէն կախում ունի զոդցես՝ Ազգիս բարեկեցութիւնը և ապառնի բարօրութիւնը. անոր միջնորդութեամբ կարող կըլլայ մանուկ մի՝ ինչպէս որ պէտք է կրթուիլ, իւր մանկական ծաղիկ հասակէն սկսեալ. անոր ազդած խորհուրդներով և տուած շահաւէտ խրատներով կը շարժի յետոյ այն մանուկը. վերջապէս Իդական սեռին պաշտօնն է՝ մարդուս հոգին կրթել, անոր մտաց բարեկարգութեան օգնական ըլլալ և մարմնաւոր առողջութեանը հիմը դնել, որոնցմէ յառաջ կը դան բազմաթիւ օգուտներ, թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական։

Ինչպէս որ ըսած էք, Յարգոյ Խմբագիր, ձեր Հանդիսին 67 թուոյն՝ Իգական սե՞ռին կրթութիւնը անհրաժեշտ է վերնագրով յօդուածին մէջ, ես ևս կը կրկնեմ թէ արդարև Իգական սեռը՝ Արական սեռին վրայ մեծ ազդեցութիւն ունի, և

Մանկութեան, Երիտասարդութեան և Ծերութեան վրայ մեծապէս կիշխէ ։

Բաց ասկէ, Իգական սեռը պարտաւոր է՝ իւր կենաց բոլոր հասակներուն մէջ, նոյնպէս նաև ընկերային այլ և այլ յարաբերութեանց մէջ, ընտանեկան հրեշտակ լինել։ Հրեշտակ, ըսելովս չկարծեն ընթերցողք, որ իմ սեռս գովելու դիտաւորութիւն ունիմ, ո՛չ երբէք. այլ բազմաթիւ բարոյագետ և հմուտ անձերու գաղափարին արձագանգը կըլլամ։

Մանկութեան մէջ պարտաւոր ենք մեր ծնողաց տունը մեր գարնանային շնորհօքը, տղայական զուարթութեամբը և մեր պատանեկան բարեմտութեամբը լնուլ և զայն միշտ զուարթ պահելու աշխատիլ։

Երբ Ամուսնութեան կապը ընդունեցինք. — Ի՞նչ պիտի ըլլայ մեր պարտաւորութիւնը. — Աստուծոյ՝ մեզի պարգևած ամուսնոյն բարեբաղդութեան կամ դժբաղդութեան պատճառը կրնանք լինիլ՝ մեր խոհեմութեամբը կամ անխելք վարմունքովը ։ Մեր ձեռքը պիտի ըլլայ զնա՝ մարդկային ընկերութեան մէջ բարձրացնելը կամ խոնարհեցնելը. մեր բարքէն ու վարքէն կախում ունի տանը՝ արքայութեան կամ դժոխքի դառնալը ։

Երբոր Մայր ենք, դեռ ևս մեր պարտաւորութիւնները աւելի ընդարձակ և աւելի բարձրագոյն պիտի լինին ։ Ամեն բան նախնական կրթութենէ կախում ունի և Ընտանեաց, հետևաբար Ընկերութեան և Ազգին ապագան մայրական ազդեցութենէն կը հոսի. ուստի մայր մի պարտաւոր է բարեկիրթ, ուսումնասէր և ազգասէր լինել.....։

Այս պարտաւորութիւններէն զատ Իգական սեռը նուիրական անհրաժեշտ պարտաւորութիւններ ևս ունի կատարելիք առ Բարերարն, և այն մարդէ մի աւելի ։ Այո՛, որովհետև մայր մը պատասխանատու է իւր որդիներուն ապագայ որպիսութեան և իւր պարտաւորութիւնն է զանոնք ըստ բնական, բարոյական և Աստուածային օրինաց դաստիարակել։

Այս Պարտաւորութիւններն են ահա, այսինքն Օրհորդի, Կնոջ և Մօր և ասոնց ամենուն առ Աստուած ունեցած պարտաւորութիւնները, զորս անթերի կատարելու պարտական ենք իգականք.

Ուստի ես ալ յանձնառու պիտի ըլլամ հետզհետէ, ժամանակ առ ժամանակ այս Պարտաւորութիւններուն վրայ խօսիլ զուարթ Գարունի մէջ. զորս հմտալի գրքերէ քաղելով՝ իմ համազգի սեռիս կը նուիրեմ, և այս կերպիւ անոր օգտակար հանդիսանալու յուսով.

Մնամ եւ

Հայուհի.

ԵՐԿՈՒ ԹՇՈՒԱՌ ԵՒ ԲԱՐԵԲԱՂԴ ԱՆՁԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Շարունակութիւն (1)

Երկրորդ օրը առաւօտուն մուրհակները ընդունեցի ։ Քսիսթ գլխ խաբած չէ եղեր ։ Նախնի խնամակալին խարդախութիւնը յայտնի էր ամենուն և անոր ընթացքը վրէժխնդրութիւն կը գոչէր ։ Ես իմ որբութեամբս ամեն բանէ կողոպտուած, թալլուած որբերու պաշտպան լինելու կը պատրաստուէի ։ Եւ այս բանս ինձի հրամայողը Ռոտոլֆի դատաւորն էր ։՝ Նոր կեանքով մի շնչաւորեալ զգացի ինքզինքս ։ Գուցէ այս պատուականագոյն ապագայի մը դուռը լինի, կըսէի իւրովի ։ Ընդուլ և անդադար ցերեկ գիշեր աշխատեցայ ։ Վերջապէս իմ ըսելիք խօսքերս կարգի դնելով, անոնց վերայ խորհելով և զանոնք կոկելով՝ ինչպէս որ պէտք է մտացս մէջ դրոշմեցի ։ Այս ինծի յանձնուած դատին արդարութիւնը լաւ իմացած և անոր վերայ համոզուած էի ։ Ամեն տեղ այս գործին վերայ կը խօսէին ։ Պաշտօնակիցներս վերաս կը նախանձէին. ամեն մարդ իմ յաջողութեանս կը ցանկայր ։ Ընդհանուր համակրութիւնը ատենական փառաւոր ժողով մի կը խոստանայր ։

Դատին ունկնդրութեան օրը հասաւ ։ Արահը մտածիս պէս, արիւնս դէպ'ի սիրտս հոսիլը զգացի ։ Կուրծքս կը ճնշուէր, քանզի բեմը փառաւոր ունկնդիրներով լեցուն էին ։ Ամեն մարդ իւր աչքերը սիրուն որբերուն, անոնց երկրորդ խնամակալին և իմ վերայ տնկած էր ։ Ամբաստանեալը կատաղի նայուածներ կարձակէր մեր վերայ ։ Անիկա խիստ ճարտար փաստափան (ավոքաթ) մի ընտրեր էր իրեն համար ։

Ռոտոլֆի ժպտելով մի գլխ քաջալերեց ։

Վերջապէս սկսան վիճաբանութիւնները ։ Եթէ իսկզբան վախ պատճառէի, ա՛լ յետ այնորիկ սիրտս դիւրութիւն կըզգար ։ Ի ներքուստ համո-

(1) Տես թիւ 16. երես

կը դնէի։ Լսած խօսքերուս բարեկամաբար կը ժպտէր, և օր մի ինձմէ բաժնուած ժամանակը ըսաւ ինձի։

— Գոհութիւն Աստուծոյ. անցան հիմայ բոլոր ասոնք։ Բայց վստահութիւնը վստահութիւն յառաջ կը բերէ։ Անշուշտ ի ժամանակին դուք ալ իմ կենացս պատմութիւնը կիմանաք։

Ճամբը բաւական յառաջացեր էր, և գիշերները խիստ երկար էին, երբոր Ռոտոլֆիի կողմանէ հրաւիրանաց թուղթ մի ընկալայ։

Շատ ժամանակ էր որ Անթուանէթը տեսած չէի։ Անիկայ մի քանի շաբաթ իւր ազգականներուն և բարեկամներուն տունները անցուց։ Սաստիկ բաղձանք մի սիրտս կը թնդացրնէր։ Կը կարծէի որ փառաւոր գիշերային ակումբ մի պիտի լինէր. բայց բովանդակ ընտանիքէն և երկու օտարականներէ զատ մարդ չգտայ այն տեղ։ Օտարականներէն մին եկեղեցական մի էր, և բնականապէս պատկառելի և մեծարոյ կերպարանք ունէր. իսկ միւսը աշխարհական մի՝ որուն դիմաց գծագրութիւնը, բարութիւն, անբծութիւն և համարձակ հաւատարմութիւն կարտայայտէր։

Ռոտոլֆի անոնց հետ մտերմաբար կը վարուէր և ընտանութեամբ կը խօսակցէր հետերնին. և այս բանս իմ հոգիս բարի ազդեցութիւն մի ըրաւ։ Բայց զարմացմամբ նայեցայ որ ինձի ո՛չ նոցա ո՞վ լինելը և անունները իմացուց և ո՛չ ալ անոնց ներկայացուցի։ Թէպէտև ես ինքզինքս նոցա ներկայացուցի։ Ընտանեաց բոլոր անդամները նոցա անկեղծ յարգանք կը ցուցընէին։ Երբէք Ռոտոլֆի դատաւորը այնօրուան պէս զոհ և զուարթ տեսած չէի. բայց սակայն իւր այս ներքին յայտարարութեան հետ մի տեսակ մելամաղձութիւն խառնուած էր, որուն վրայ բնաւ տեսած չէի այս։

Անթուանէթի աչերէն զէպ ինձի փայլակներ կարձակուէին և անոնց միջոցաւ կը խօսէր նա հետս. ես ալ այս համր լեզուէն կը հասկընայի։ —

— Ամէն մարդ ժողովեցաւ և ամէն կողմ անուշահոտութիւն մի սփռեցաւ. յետ այսորիկ դատաւորը ըսաւ ինձ։

— Այսօր իմ վաթսնամեայ տարիքս կը լրացընեմ. անոր համար այս գիշեր ուզեցի ինձի սիրելի եղող անձերու հետ անցընել։ Այս երկու պարոններն ևս հիմայ պիտի ճանչէք, որոնք մտերիմ բարեկամներ են։

Յայտնեցի անոր իմ իրեն երջանկութեանը համար ունեցած փափաքներս.

— Լաւ գիտեմ որ դուք անկեղծօրէն կը խօսիք՝ ըսաւ ինձի ձեռքս սեղմելով։

— Ալբերթ յաւելցուց նա, եկեղեցականին ուղղելով իւր խօսքը, գուն շատ աղէկ արտասանելու տաղանդը ունիս, բարեհաճէ՛ սա մի քանի երես գրուածը բարձրաձայն կարդալ։ Անոր մի փոքր տետրակ երկնցուց, ետքը դէպ իմ կողմս դառնալով՝ ըսաւ ինձի։

— Կը յուսամ որ մէջի պարունակուածը զմեզ չպիտի ձանձրացրնէ։

Քահանան յստակ ձայնով հետագայ խօսքերը կարդաց։

(Շարունակելի։)

ԱՕԴ

Յետագայ Դաշնակները Անկլիոյ ազատասէր և անմահ բանահիւսի մ'երկասիրութիւններն են. բանահիւսի մը որու գրութիւններու վեհ միտքը և անոյշ ոճը մեծ ազդեցութիւն ունեցած են տարագիր սրտերու վրայ։ Պայրն այն ազատասէրներէն մի է որ սոյն դարու սկիզբները Աքիլլէսի թոռներու ազատութեանը և անկախութեան համար թէ գրչի և թէ արդեամբ աշխատեցաւ ոգւով չափ։

Գ. Մ-եր.

ԴԱՇՆԱԿՔ ԵԲՐԱՅԱԿԱՆ

ՅՕԴ. Ա.

Ա.

Պայրի այծեամը դեռ կրնայ խայտալ Յուդայի երկրին բլուրներու վրայ, այն սուրբ երկրէ բխած ամէն աղբիւրներէ կրնայ անիկայ իւր ծարաւը յագեցնել. իւր այերային ոտքերը կանգ կ'առնուն՝ այլ իւր անոյշ աչերը մահ պատճառող առարկայ մի չ'են նշմարեր շուրջանակի։

Բ.

Յուդայ իր բլուրներու վրայ տեսած է երբեմն նրան քայլերէ ոչ նուազ արագ, և նրան աչերէ աւելի անոյշ աչեր, և իր այն հիմայ ամայի երկիրը զարդարելու աւելի արժանաւոր էակներ...։ Պայրի անտառները իրենց ոստերը դեռ կը տարածեն Լիբանու լեռին վրայ; այլ Յուդայի անոյշ օրիորդները՝ ա՛լ չ'են հանդչիր նոցին շուքի ներքևը։ —

գրուածն ալ որ նոյն տարին ներկայացուեցաւ, դարձեալ շատ ծափահարութիւններով ընդունուեցաւ ժողովրդէն։ Ասոնցմէ ետքը եկաւ Դիւրքարէ, իր Թատրերգական հրաշակերտը, որ ելեմտից պաշտօնեայներուն վրայ խիստ ճարտար քննադատութիւն մըն է։ Ասոր ներկայացուելուն դէմ ամէն կարելի եղած արգելքները հանեցին, և Ելեմտականք երբ հնարքներով գլուխ չկրցան ելլել, 100,000 լիրայ առաջարկեցին հեղինակին, որպէս զի գործը տեսարանին վրայ չհանէ. բայց անիկա մերժեց, և Դիւրքարէ արքայական յատուկ հրամանաւ 1708 փետրվար 14ին վերջապէս ներկայացուեցաւ։ Գտած ընդունելութիւնը չտեսնուած բան էր։ Լըսաժ 1715ին Ժիլ Պլա տը Սանթիլլանը հրատարակեց, որն որ ա՛լ աւելի իր անունը հռչակեց։ Լըսաժ ուրիշ հեղինակութիւններ ալ ունի՝ որոնք վերը յիշատակուածներուն չեն կրնար հաւասարիլ։

Իր անդրանիկ որդւոյն մահուանը վրայ սաստիկ վշտացած, Պուլօնեը-Սիւր-Մեր քաշուեցաւ իր ուրիշ մէկ որդւոյն քով, որ կանոնիկոս եղած էր. Իր մտային կարողութիւնները կամաց կամաց ինկան և 1747 Նոյեմբեր 17ին մեռաւ։

Գարնան Հայաստանի Ա. շրջանին եօթներորդ թուոյն մէջ, Մարմոնթէլի Պէլիզէր վիպասանութենէն ընտիր մասն մը պարզ գրաբարի թարգմանած էինք հեղինակին համառօտ կենսագրութեամբը հանդերձ, և միանգամայն խոստացած էինք մատենագրութիւններէ ժամանակ առ ժամանակ այսպիսի ծաղկաքաղներ ընելով հրատարակելու։ Ահա՛ այս անգամ ալ, մեր խոստումը կատարելով՝ Լըսաժի գեղեցիկ և ճարտար գրչին մէկ ճաշակը տալ կը փափաքինք ընթերցողաց, անոր Ժիլ Պլա տը Սանթիլլան համբաւաւոր վիպասանութենէն մէկ ամբողջ հատուած մը դարձեալ պարզ գրաբարի թարգմանելով։ Ընթերցողք զայն կարդացած ժամանակնին անոր ոճոյն փափկութեանը և ազնուութեանը հետ պիտի դիտեն անշուշտ թէ որչափ կոկիկ և ամենաբնական կերպով պատմուած է պատմութիւնը, և ըստ այնմ յիշուած պարագաներն ալ որչափ հաւանականութեան կնիք և կերպարանք ունին։ Ինչպէս յայտնի է, հոն է որ և իցէ վէպի մը բուն ոգին, և անոր ընելիք ազդեցութեան առաջին և գլխաւոր շարժառիթը.

Մ. Ն.

Մինչ զառաջինն դիպեցաւ մեզ տեսանել ըզմիմեանս, ասէ ցիս (1). Արքաղան եպիսկոպոսին Կրընատայ, ազգակցին իմոյ և բարեկամի իղձք են ընդունիլ առ իւր զերիտասարդ զոմն ներհուն գրականութեան, և քաջավարժ և արագ 'ի գրութիւն, ընդօրինակել 'ի մաքուր զշարադրածոյս իւր. զի մատենագիր հոյակապ ճանաչի նա։ Չգիտեմ որչափ ինչ ճառս յօրինեալ է նորա բարոյախօսս, և յօրինէ իսկ աւուր աւուր, զորս 'ի ծափահարութիւնս արտասանէ ողոհունկութեան։ Եւ զի քաջայարմար զքեզ վարկանիմ վասն նորա, բան առեալ է իմ զքէն և նորա խոստացեալ ընդունիլ զքեզ։ Երթ յանդիման լինել նմա և յընդունելութենէ անտի նորա, քաջ 'ի վերայ հասցես եթէ խօսեա՛լ իցէ իմ զքէն կարի նպաստաւորութեամբ։

Այս պայման թէութեան նորա ըստ ըղձից իմոց թուեցաւ ինձ լինել։ Այր սակս կազմեալ պատրաստեալ իմ լաւ ևս որչափ ինձ գալ էր երևիլ առաջի Արքաղանին, չոքայ զառաւօտ մի յառաջնորդարանն։ Եթէ կամ էր ինձ հետևիլ աստանօր վիպասանից, 'ի հոյակապ իմն նկարագրութիւն զբաղէի արդեօք եպիսկոպոսական պալատանն Կրընատայ։ Ի ճառ արկանէի մանրապատում զշինուածոյն ընդհանրապէս, գրուատ հարկանէի զճոխութենէ կահուց և զկարասեաց, զանդրեացն լինէին ինձ բանք և զնկարիցն որ անդ. ո՛չինչ շնորհս առնէի ընթերցանելւոյն զյիշատակութեանց զկարի իսկ դուզնաքէից, զորս սովոր է նոցա ներկայել առաջի։ Շա՛տ իսկ համարեցայց ասել և եթ զի հաւասարէր այն 'ի շքեղութիւն պալատան արքայիցն մերոց։

Ի սրահսն անդ գտի զամբոխ ինչ կղերականաց և զզինուորականաց, յորոց յոլովք անտի պաշտօնեայք էին Արքաղանին. ողորմաբաշխք, ազնուականք, ախոռապետք և սենեկապետք նորա։ Ամենեցուն սպասաւորաց զոգցես պերճաշուքք էին հանդերձք. առաւել աւագանիս՝ քանթէ սպասաւորս կարծէր զնոսա ոք։ Բարձրամիտք էին նոքա և առ մեծ ինչ և կարևոր որեար ունէին զանձինս։ Ի գիտելն իմ զնոսա չեղև ինձ հնար սանձել զծիծաղ և ո՛չ ծաղր առնել զնոքօք ընդ միտս իմ։ Տէ՛ր անդր, դոչէի, արքս այս երանիկք են յոյժ զլուծ ինչ կրել ծառայութեան, զոր և ո՛չ զգանն. զի հուսկ ուրեմն եթէ երբէք լինէր նոցա զգալ, այնպէս իմն թուի ինձ ո՛չ կարի յոյժ ամբարհաւաճ ի կիր արկանել նոցա ձևս։ Դիմեցի

(1) Ժիլ Պլասայ պատմութեան. Սպանիացի աբբայ մըն է խօսողը.

առ ծանրակաց ոք և թանձրամարմին, որ առ դրամբ կանգնէր եպիսկոպոսական սենեկին, 'ի փակել զայն և 'ի բանալ ըստ հարկի ։ Հարցի զնա յեղանակ իմն քաղաքավարութեան թէ մա՞րթ ինչ իցէ խօսիլ առ Արքազանն ։ Կացջի՛ր մնասջի՛ր, ասէ ինձ ի ձայն իմըն հատու. Արքազնութիւն նորին եւցէ ընդ հուպ 'ի սենեկէն առաջակայ դտանիլ պատարագին. տացէ քեզ յանցանելն անդ իբրում ժամանակ ունկընդրութեան. Ո՛չինչ ետու պատասխանի ։ Զինեցայ 'ի համբերութիւն, և խորհեցայ բուռն հարկանել յօդելոյ զրոյցս ինչ ընդ ոմանս 'ի պաշտօնատարաց ։ Այլ նոքա քննէին զիս խուզարկու իմն աչօք ի գլխոյ անտի իմմէ մինչև ցոտս, ոչինչ բան արտաբերել համարելով՝ Հայեցան ընդ իրեարս ծըպտելով խոխտանօք ընդ առնուլ իմ զաղատութիւն մտանելոյ ի բանակցութիւնս նոցա ։

Խոստովան լինիմ, զի 'ի մեծի կայի յայնժամ 'ի յուզման ընդ այսպիսի ընթացս ծառայից առ իս ։ Չև ես քաջ սթափեալ իմ 'ի շփոթութենէս, այն ինչ բացեալ դուռն սենեկին և երևեցաւ ահա՛ եպիսկոպոսն ։ Ընդէն առ նմին թագաւորեաց լռութիւն մեծ ի պաշտօնեայս նորա, որք յեղակարծում իմն թողին զանպատկառ դիրսն, առ ի զակնածականն ցուցանել յանձինս առաջի տեառնն իւրեանց ։ Եկեղեցականն այս էր ամաց իբր վաթսուն և իննից, զհօրեղբօրն իմոյ զԳիլ Բերեզայ կանոնիկոսի ածելով յինքեան զոզցես զկազմուած. յոյր իմն և կարճահասակ ։ Բայց յայսմանէ ոտք նորա կարի յոյժ 'ի ներքս շըջեալք. և այնպէս ճաղատ էր նա, մինչև ցցունս ինչ հերաց մնալ միայն 'ի յետուստ. յոր սակս և առեալ նորա պահել զգլուխն 'ի գդակ ինչ յաղնիւ կտաւեայ, ունկունս ունելով երկայնադիրս ։ Սակայն և այնպէս նշմարէի ես զերևոյթ ի նմա զառն արժանաւորի, անտարակոյս՝ զի գիտէի զոլ զնա այնպիսի ոք ։ Մեղ արանցս ոսկականաց, սովոր է 'ի կանխակալ կարծիս հաւնիլ 'ի մեծամեծս, որ յոլովակի զմեծութեան ինչ տայ նոցա երևոյթ, զոր ժխտեալէ նոցաբնութիւնն ։

Զառաջինն մատուցեալ առ՞իս եպիսկոպոսին եհարց ցիս 'ի ձայն հեշտալուր թէ զի՞ խնդրիցեմ ։ Ասեմ ցնա լինել երիտասարդն՝ զորմէ եղեալ էին բանք ի Տօն Ֆերնան տը Լէյվայէ Սեպուհէ ։ Չետ ինձ նա ժամանակ առաւել խօսելոյ. — Ո՛հ, դո՞ւ իցես, գոչեաց, դո՞ւ իցես, զորմէ դերազանց կարդաց նա ներբող ։ Յայժմուս իսկ ընկալեալ ըզքեզ ի ծառայութիւն իմ ։ Քաջ իմն ստացումն ես դու վասն իմ. ուստի և բնակեսջի՛ր ընդ իս ։ Ընդ բանս ընդ այսոսիկ յեցեալ նորա յերկուս ախոռապետս և ել արտաքս, յետ ունկն դնելոյ կղերականաց ոմանց որք ունէին ինչ հաղորդել նմա ։ Հազիւ հազ ելեալ նորա 'ի սենեկէն, և եղեւ զի որք զտեսութիւն իմ արհամարհ առնէին պաշտօնատարք, այժմիկ 'ի խնդիր այնր լինէին ։ Ահա շուրջ պատէին զինև, քաղցրուն մեծ ցուցանէին և զխնդութիւն իսկ զիւրեանց հաւաստէին ընդ սեղանակից լինելն իմ յարքեպիսկոպոսարանի ։ Լուեալ էր նոցա զբան տեառն իւրեանց, և ողեսպառ լինէին զոզցես գիտել թէ յո՞րպիսում աստիճանի կալոց էի առ նմա ։ Այլ չարակամութիւն եղև ինձ ո՛չ հետաքննութեան նոցին տալ յագուրդ, առ 'ի զարհամարհանաց նոցա լուծանել զվրէժ ։

Ոչ յապաղեաց Արքազանն դառնալ այսրէն ։ Եմոյծ զիս ի սենեակ իւր 'ի ներքին խօսիլ ընդ իս առանձինն ։ Խելամուտ եղէ քաջ զի դիտաւորութիւն էր նորա զմիտս իմ փորձել, յոր սակս յըզգոյշ կացի և պատրաստեցայ զամենայն բանս իմ կշռել ։ Զառաջինն եհարց զիս զնախափիլիսոփայական հրահանգաց. ոչինչ յոռի ետու պատասխանիս հարցմանց նորա. ծանեաւ նա թէ բաւ իսկ ծանօթ էին ինձ մատենագիրք Յոյն և Լատին ։ Յետոյ ապա էանց նա 'ի տրամաբանական գիտութիւն, որում մնայի ես ակնդէտ ։ Քաջալաւ գտեալ զիս և յայն՝ ասէ ցիս զարմացմամբ. Ոչինչ իւիք վանց զդաստիարակութեամբ քոյով արարեալ են բնաւ. զգրութիւն քո կայ մնայ մեզ միանգամ տեսանել ։ Կորզեցի ի գրպանէ իմմէ թերթ ինչ, զոր և մասնաւոր իսկ տարեալն էր իմ ։ Ոչինչ ընդհատ լաւ և այն՝ տեառն իմում երևեցաւ Արքազանի ։ Գոհութիւն է իմ զգրութենէ քումմէ, գոչեաց նա, և առաւել ես զհանճարոյդ ։ Շնորհս կալայց ըզՏօն Ֆերնանտէ, զեղբօրորդւոյ իմմէ, որ զայսպիսի սիրելի ոմն ընծայեաց ինձ պատանի. իսկ և իսկ պարգև է այն, զոր արար նա ։

Զկնի կիսաւուրն ճաշոյ չոքայ ես 'ի խոյզ լինել և 'ի խնդիր սպասուց իմոյ և երիվարի 'ի պանդոկն՝ յոր օթևանեալն էի. յետ որոյ վերադարձեալ յեպիսկոպոսարանն յընթրել, գտի զսենեակ ինչ վայելչամաքուր յոյժ յարդարեալ վասն իմ և զանկողին 'ի փետրոց փափկութեան ։ Ի միւսում աւուր, վաղ քաջ ընդ առաւօտն կոչեաց զիս առ իւր Արքազանն և ետ զճառ ինձ յընդօրինակութիւն յանձն առնելով ինչ յամենայն ճշգրտութիւնս նկրտիլ հնարաւորս ։ Ոչինչ զանց զյանձնարարութեամբ նորա արարի, և ոչ իսկ 'ի մոռացօնս արկի ո՛չ զշեշտ, ո՛չ զստոր, և ո՛չ զմիջակէտս. ընդ որ խնդութիւնն զոր եցոյց՝ խառն էր ընդ զար֊

մացման։ Աստուած մեծ, զոչէր եռանդայոյզ, յետ քննելոյ զամենայն թերթս ընդօրինակութեան իմոյ, ոյր ուրուք տեսեալ իցէ երբեք զայսպիսի ճշգրտութիւն։ Քաջ ոմն ընդօրինակիչ ես դու, զի մի՛ ասացից զրամարտիկոս։ Խօսեայ ինձ խորհրդաբար, բարեկամդ իմ, յօրինակել քում 'ի մաքուր դտեր արդեօք ինչ ի նմա որ ընդհարիցէն զքեզ, զանցառութիւն ինչ զոհոյ կամ զասացուած ինչ անպատեհութեան։ — Ո՛հ, Սրբազան Հա՛յր, ի համաստ իմն եղանակ ետու նմա պատասխանի, չեմ ես ներկուռ ոք և խորամուխ 'ի քննադատական դիտողութիւնս, և եթէ լինէի իսկ քաջայոյս եմ զի գրութիւնք Ձերումդ Մեծութեան դեր 'ի վեր քան զիմ քննադատութիւնս բարձրանային։ Դպտեցաւ Սրբազանն ընդ իմ պատասխանի. ոչինչ խօսեցաւ նա, այլ տեսի ես զի յամենայն բարեպաշտութեան իւրում չէր նա մատենագիր ոմն անստգիտ 'ի թերութենէն։

Մնացեալը յաջորդ թուով։

Աչք եւ այլ Խորհրդածութիւններ.

Բանականութենէ և բարի զգայողութենէ զուրկ անձ մի՝ իւր բերնէն ելած խօսքը չկրնար կշռել։ Գարբեգին.

Եթէ մարդ մի, փորձուած և ստուգուած խենթի մը նախատական, ափեղցիեղ խօսքե ը և այլանդակ զրոյցները բանի տեղ նելով՝ առնուի, ինքն է խենթ։

Զինոյի Բարոյական մատենէն մի.
Խաղաղ.—

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՐՑՄԱՆ 136Դ ԵՐԵՍԻՆ

ԺԵ.— Մարդակեր ազգեր կան տակաւին աշխարհի վերայ.—

ԺԵ.— Մարդկային միս ուտելու սոսկալի սովորութիւնը՝ մի միայն, այն ալ դունուրեք, Ովկիանիայի մի քանի կղզիներուն մէջ կը գտնուի։ Ամերիդայէն անհետացած է այս, բայց ի սովի ժամանակ (դժբաղդաբար այս բանս շատ կը պատահի Բրանատայի և Նոր Բրիտանիայի անզգոյշ և ոչ հեռատես ցեղերուն մէջ) որ կը պատճառի՝ երբ որսորդութիւնները և ձկնորսութիւնները ապարդիւն ելնեն։ Բայց սակայն, ասոր նման դէպքերու մէջ, այսպէս զործող Ֆերմակներ ևս տեսնուած է շատ անգամ։

Ափրիկէի մէջ, Ատամոս-ոյի կայսրութեան հիւսիսային և հարաւային արևելեան սահմաններուն վերայ գտնուող՝ մի քանի լեռնցի ասդանդականներ մարդու միս կ'ուտեն, այսպէս կը կարծեն ոմանք Ճանապարհորդներէն։ Այս տեղեկութիւնը հաւ քած են նոյն իսկ մերձակայ կողմերու Բէջուլներու և ուրիշ դ-ոխ-լմանների բերնէն։ Բայց ոմանք ալ կըսեն թէ ասիկայ Ափրիկեցի դ-ոխ-լմաններուն կողմանէ եղած զրպարտութիւն մի է ընդդէմ սեաւ կռապաշտներու, բաճաները արդարացնելու համար, որոնք անոնց մէջ կը մտնեն զանոնք ի դարձի բերելու աղագաւ։

Ովկիանիայի մէջ, ափրիկեցի սեւերէն խիստ-ստորին սեւերու անասնանման և ապուշ ցեղ մի կայ, որոնց մէջ մարդակերութիւնը գրեթէ ընդհանրական բան մի եղած է։ Շատ կղզիներու մէջ այս բանիս հետքերը մնացած են տակաւին. և Մալեզիայի Պոլեաս կղզիները, որոնք վերոյիշեալ ցեղին կը վերաբերին, անոնք ալ այս համբաւը ունին։ Այս պատճառաւ, այս ժողովուրդներու լեզուաւ, աղէկ աղջիկ մի, աղէկ մանչ մի խօսքերը՝ մեր մէջը ունեցածէն բոլորովին նիւթական նշանակութիւն ունին։ Այսու ամենայնիւ, ասկէ եօթն — ութը տարի յառաջ, աներկիւղ և յանդուգն Ճանապարհորդուհի մը, Տիկին Իտա Բֆէյֆէր, առանձին Պոլեաի բնակչաց մէջ մտաւ, անոնց հետ ծանօթութիւն ունեցաւ, առանց բնաւ անոնցմէ ուտուելու։ Այս դէպքէս կարելի է եզրակացնել թէ ուրեմն այս խեղճ վայրենիներուն վերայ ըսուածը զրպարտութիւն է. բայց սակայն խիստ ապահով լինելոյ համար՝ ասոնց պէտք չէ վստահիլ։

Խաղաղ.

ՀԱՐՑՈՒՄՆ.

ԺԱ.— Ի՞նչպէս լինի Հպարտ անձ մի.—

ՀԱՐԱԳԻՐ—ՏՆՕՐԻՆ
ԳՐ. ՇԳ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ՕՄԻՈՆԻՈՒ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԻՏԼԵԱՆ